ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

26 հունիս 2024 թվական N 02-Լ

ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով, 40.1-ին հոդվածի 14-րդ մասով, 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ պետական ֆինանսավորում ստանալու իրավունք ունեցող կուսակցություններից «Հանրապետություն», «Վերածնվող Հայաստան» և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվությունների աուդիտորական եզրակացություններն ստացվել են 2024 թվականի մայիսի 30-ին, որից հետո տարեկան հաշվետվությունների ստուգման ընթացքում ինչպես պետական մարմիններից, այնպես էլ կուսակցություններից տեղեկություններ և փաստաթղթեր են պահանջվել, սակայն դեռևս ամբողջ ծավալով չեն ստացվել, իսկ «Հայ ղեղափոխական դաշնակցություն» և «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվությունների աուդիտորական եզրակացություններն ստացվել են 2024 թվականի հունիսի 25-ին՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ***որոշում է.***

1. Կուսակցությունների 2023 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման ժամկետը երկարաձգել 60 (վաթսուն) օրով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂԻՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Լ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ք. Երևան